




Կարագիտակ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՑԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ԽԻՆ 20



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Բնակ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԱԳԻՏՈՒՄ  هانراکيداق HANRAKIDAGUE
ՀԱՐԱԹԱԿԱՆ  مجموعة علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 20 || 17 ՄԱՅԻՍ 1903



ԱՂՔԱՏ ՏՂՈՒՆ

Ե Ր Գ Ը

Աղբափ մը զաւակն եմ ես,
Օրհնքս է սոսկ ջա՛նքը յամառ,
Կ'ըսեն՝ ճոխին դուն եղբայրն ես,
Բայց կը խորհի՞ ան ինձ համար:
Թէ աշխատանք կ'արժէ աղօթք,
Տէ՛ր, կը դիմեմ անա քու ոսք:

Օրորոցէն մինչ շիրմին փոս,
Շա՛ս է շարքը աշխատանքին.
Բայց անգործին սիրսն է բորբո՛ս,
Մինչ բանողին՝ ազնի՛ւ հոգին.
Բանւորի մը զաւակն եմ ես,
Տէ՛ր, պարգեւէ՛ Բու լոյսը մեզ:

Ջա՛նքն է որ մեր հողերը ծեր
Կ'ընէ բերրի, առաս, հարուս,
Ջանքն ալիքէն կ'առնէ զանձեր՝
Բի՛ւր մարգրիս, ադամա՛նդ, բո՛ւս:
Աշխարհի կ'իյնայ աշխատանքին,
Աշխատողի՛ն ու իր զաւկի՛ն:

Մ. ԻՍԳԻՐԵԱՆ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԱՅԻՆՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

4. — Կենդանիներուն հետ լաւ վարուելու մեջ շահ ունիցմ

Ագարակապանուհի մը իր էշուն վրայ նստած շուկայ կ'երթար կ'ըրօսնուր (եթէ կարելի է այսպէս ըսել) ձեռքի գաւազանով անոր փոքրիկ հարուածներ տալով, ինչո՞ւ կենդանին կը սոսկար ամէն հարուածէն, բայց հնազանդութեամբ կը շարունակէր իր ընթացքը: Վերջապէս անգամ մը աւելի զօրաւոր հարուած մը տուաւ, կենդանին մռնչեց, գաւազանը կտորեցաւ ագարակապանուհիին ձեռքին մէջ, որ բարկութեամբ կտորները հեռուն նետեց, ինչո՞ւ էջը, ականջը բոլորովին արիւնլուայ կանգ առաւ ու ճամբուն մէջ տեղ անշարժ մնաց: Թէ ի՞նչ կ'անցնի իր միջին իմացականութեան մէջ, չենք գիտեր. բայց այն վայրկեանէն յետոյ ա'լ չհնազանդեցաւ: Եւ ագարակապանուհին ի զուր կը քաշէր սանձէն, որ քալեցնէ, կենդանին անշարժ իր տեղը մնաց:

Շուկայի ժամանակն անցաւ ու ագարակապանուհին չկրցաւ քաղաք հասնիլ իր բանջարեղէնները ծախելու համար:

Կենդանիները իրենց համար վայրենի զօրութիւն կամ կամք ունին մեզի դէմ գիրենք պաշտպանելու համար: Անոնց հետ միշտ քաղցրութեամբ վարուինք եւ մեզի հնազանդ պիտի ըլլան. եթէ անգութ ըլլանք անոնց հանդէպ պիտի ընդվիզին, կամ նեղութենէ պիտի մեռնին: Այսպէսով անոնց մատուցած ծառայութենէն պիտի զրկուինք եւ մեր անգթութեանը համար պիտի պատժուինք:

5. — Կռամօնի օրհնք

1850ին Կռամօն զօրավարը Կռավարութեան առաջարկեց օրէնք մը, որու նպատակն էր ընդունիլ կենդանիներու պաշտպանութիւնը: Ընդունուեցաւ այս օրէնքը, որու տրամադրութեամբ տուգանքի ենթարկուած են եւ մինչեւ իսկ բանտարկութեան՝ անոնք որ ընտանի կենդանիներու հետ չարաչար վարմունք ունեցած են:

1845ին Փարիզի մէջ կազմուած ընկերութիւն մը, նոյնպէս իրեն նպատակ ունի կենդանիներու հետ գէշ վարմունքը արգիլել: Ասիկա է Կենդանիներու պաշտպան ընկերութիւնը, որ ամէն տարի

կը վարձատրէ զանոնք, որոնք գրաւոր կերպով վկայուած են՝ թէ լաւ վարուած են ընտանի կենդանիներու հետ, լաւ խնամած ու լաւ դարմանած են: Այս ազնիւ անձնաւորութիւնները իրաւունք ունին ոստիկանութեան ձեռքով ձերբակալել տալ զանոնք, որ անգթութեամբ վարուած են ընտանի կենդանիներու հետ:

Սյապէս ուրեմն ժողովուրդի մը մեծամասնութիւնը համաժխտ է այս կէտին թէ՛ պէտք է կենդանիներուն հետ քաղցրութեամբ վարուիլ:

6. — Ի՞նչպէս պիտի ոչնչացնենք վնասակար կենդանիները

Կան չարիք հասցնող կենդանիներ, որոնք իրենց վայրենութեամբ կամ իրենց գործած աւերմունքով, ամենամեծ չարիքը պիտի հասցնէին մարդկային ընկերութեան, եթէ անոնց դէմ չը պաշտպանուէին: Գայլերը, վագրերը, թռնաւոր օձերը այս տեսակէ են: Ուրիշ աւելի փոքրիկ, ինչպէս դաշտային մուկեր, ինչ ինչ թռչուններ, միջատներ նոյնպէս վնասակար են:

Իրաւունք չունինք զուր տեղ զանոնք նեղել, վանդակներու մէջ չարչարել եւ իրապէս տանջելով տակաւ առ տակաւ մեռցնել: Եթէ իրաւունք եւ պարտականութիւն ունինք անոնցմէ ազատելու, թէ մեզ եւ թէ ուրիշները պաշտպանելու համար, նոյնպէս եւ պարտական ենք շատ արագութեամբ ոչնչացնել: Բռնուած վայրենի կիւղանի մը անօթութենէ մեռցնել, շտեմարաններու եւ մարախներու դրանք ողջ ողջ գամել ջղջիկ մը կամ բու մը, այս անգթութիւն է եւ անվայել քաղաքակրթութեամբ մարդուն, որ հագի ունի եւ կը հաւատայ տիեզերական բարութեան, արդարութեան: Այն՝ որ անգութ է կենդանիներու հանդէպ՝ դիւրաւ կրնայ նաեւ չարութիւն ընել իր նմաններուն:

7. — Գեղեցիկ կնճիճ

Երբեմն ճամբուն եզերքին վրայ հին ոստախիտ գեղեցիկ կնճիճ մը կար: Անոր ճիւղերուն մէջ թռչունները իրենց բոյնը կը դնէին եւ ամառուան ամբողջ գիշերները սոխակը հոն կ'երգէր: Յերեկը արեւէն ու անձրեւէն կը պաշտպանուէր յոգնած ճամբորդը, նոյնպէս անոր ստուերին տակ կը նստէին երկրագործներն հանգըստանալով եւ խօսելով:

Օր մը տղաք կը խորհին ճիւղերուն վրայ մագլցիլ եւ մէկիկ մէկիկ հաւիթները գետին նետելով կոտրել: Շուտով կնճիճի գրեթէ մերկացաւ: Թռչունները հեռացան, այլ եւս ստուեր չէր

տարածեր եւ աշխատող երկրագործները ալ չեն խմբուիր անոր շուքին տակ :

Ինչո՞ւ համար այն տղաք այս յիմարութիւնը գործեցին : Որո՞ւ համար կրնար ասիկա օգտակար եւ հաճելի լինել : Ճշմարիտը այս ըրածներնին գէշ գործ մը եղաւ : Բնութեան մէկ գեղեցիկ գործը ոչնչացուցին , չըջակայ մարդոց անբախտութիւն պատճառեցին , գեղեցիկ թռչուններուն ուրախութիւնը հեռացուցին , եւ յոգնած ճամբորդին համար անկէ վերջ այլ եւս ապաստանելու եւ հանգըստանալու անկիւն չմնաց :


Ինչ որ օգտակար է , ինչ որ գեղեցիկ է , ինչ որ բնութեան զարդն է եւ մարդոց ուրախութիւնն է՝ չոչնչացնենք :

8. — Մարդկային աշխատութեան արդիւնքը յարգենք

Տղա՛ք , երբ առանց խորհելու ձեր տետրակներէն մաքուր թերթեր կը պատուէք և մէկդի կը նետէք , երբ թեթեւամտօրէն գաճէ արձանիկ մը կը կոտրէք , երբ մկրատով մեքենաբար կը կտրէք կտոր մը , անշուշտ չէք խորհիր թէ փնասակար գործ մը կ'ընէք : Ձեր այդ ոչնչացուցածները , շատ աշխատութեան , շատ ջանքի , շատ մտածութեան արդիւնք են : Ո՛րչափ գործաւոր , ո՛րչափ հնարիչ աշխատած են յառաջ բերելու այն ամէնը , որ դուք կ'ոչնչացնէք խնդալով . այն թղթի թերթը , այն ապակիէ կամ յախճապակիէ ամանը կամ այն կտորը :

Առանց պատճառի ոչինչի մի վնասե՛ք : Այն առարկաները որ դուք կ'արհամարհէք , կրնան ուրիշի մը օգտակար ըլլալ : Նոյնպէս կրնան ո եւ է արժէք չմը ունենալ այն ամէնը , որ դուք իսպառ ոչնչացուցիք : Վերջապէս երբեմն ալ ձեր ծնողները բաւական աշխատանք կրած են զանոնք ձեռք բերելու համար : Այս բոլոր պատճառներուն համար , տղաքս , բան մը մի՛ ոչնչացնէք , անօգուտ տեղը բան մը մի կոտրէք :

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



ՆԵՆԼՈՒ

ԵՒ

ՊԱՏՐԱՅԵ

(Շարունակութիւն 19րդ թիւէն)

Նեղոն իւր ցանկութիւնները բացի Պատրաշից յայտնում էր նաեւ փոքրիկ Ալօիզին, որ ապրում էր բլրակի վրայ եղած հին



ջաղացում: Նրա հայրը ջաղացպան էր եւ գիւղի մէջ ամենաու-
նեկորէ մարդն էր համարւում: Փոքրիկ Ալօիզան մի շատ սիրուն

աղջիկ էր՝ կլոր ու առողջ դէմքով, մեծ ու սեւորակ աչքերով։ Նա պարզամիտ եւ ուրախ երախայ էր եւ ամենից շատ սիրում էր Նելլօի և նրա հաւատարիմ ընկեր Պատրաշի հետ խաղալ։ Նրանք միասին վազում էին դաշտերում, ձիւնագնդի էին խաղում, ծաղիկներ ու պտուղներ էին քաղում, երբեմն միասին երգում էին գիւղի հին եկեղեցին և յաճախ նստում էին ջաղացպանի տանը վառարանի առաջ։

Մի անգամ Ալօիդի հայրը՝ Կօգէզը, որ մի բարի, բայց փոքր ինչ կոպիտ մարդ էր, հանդիպեց հետեւեալ տեսարանին։ Զաղացի ետեւը ընդարձակ մարգագետնի վրայ նստած էր իւր փոքրիկ Ալօիզան, Պատրաշը կողքին պառկած՝ գլուխը դրել էր նրա ծնկանը, երկուսն էլ զարդարուած էին ծաղկէ պսակներով։ Իսկ Նելլօն սրանց դիմացը նստած՝ ածուխով նրանց պատկերները նկարում էր մի մաքուր սպիտակ տախտակի վրայ։

Զաղացպանը կանգ առաւ և նայեց նկարին. պատկերն այնքան նման էր որ ջաղացպանը ապաժ մնաց։ Բայց շուտով նրա շփոթութիւնն անցաւ, նա յանդիմանեց Ալօիզին, որ փոխանակ մօրն օգնելու, թափառում է անգործ, և տուն ուղարկեց լեղապատառ ու արտասուող աղջկան։ Յետոյ դարձաւ դէպի Նելլօն և տախտակը խեց նրա ձեռից։

— Դու յաճախ ես պարապում այսպիսի յիմար բաներով, հարցրեց նա. նրա խօսուածքի ձեւը կոպիտ էր և ձայնը դողում։

— Ես ինչ որ տեսնում եմ՝ նկարում եմ, երկչոտութեամբ չչնջաց Նելլօն և սաստիկ կարմրելով գլուխը կախ ձգեց։

Զաղացպանը մի րոպէ լուռ մնաց. յետոյ Նելլօին մի արծաթ դրամ տուեց ասելով.

— Դու ժամանակդ զուր ես վատնում. ա՛ռ այս փողը եւ պատկերն ինձ տուր, այդ շատ նման է աղջկանս, կնոջս մեծ բաւականութիւն կը պատճառէ։

Նելլօի դէմքից կարմրութիւնն անցաւ. նա գլուխը վեր բարձրացրեց և ուղիղ Կօգէզի երեսին նայելով՝ պարզութեամբ ասաց.

— Մօտդ պահիր և փողը և պատկերը. դուք շաա անգամ էք ինձ բարութիւն արել։ Յետոյ Պատրաշին կանչեց և դաշտով տուն գնացին։

Կօգէզը տուն ուղեւորուեց վրդովուած։

— Զպէտք է թոյլ տալ Ալօիզին, որ այնպէս յաճախ խաղ անէ այն տղայի հետ, ասաց նա կնոջը, մեր աղջիկը նրա ընկերը չէ։ Ալօիզան հարուստ է, իսկ նա աղքատ։

— Բայց նա աղնիւ ու բարի տղայ է, ասաց կինը. հիացած

նայելով պատկերին, որ կախեց վառարանի վերեւ, ժամացոյցի և խաչելութեան պատկերի մէջտեղը:

— Ճիշտ է, ասաց ջաղացպանը, գարնէնի բաժակը դատարկելով:

— Ուրեմն ինչո՞ւ միասին չխաղան, երկշտութեամբ հարցրեց կինը:

— Խելքիդ զօռ մի տար, բանը մի անգամ են ասում, ասացի որ նրանք յարմար ընկերներ չեն, կռախտ կերպով ընդհատեց ջաղացպանը:

Ալօիզին այլ եւս Նելլօի մօտ չէին թողնում: Նելլօն այս բանը նկատեց և շատ վիրաւորուեց: Նա չէր հասկնում թէ ինքը ի՞նչ յանցանք է գործել, որ այնպէս անարդար կերպով են վարւում իւր հետ: Բայց նա հպարտ և զգայուն երախայ էր. ուստի ինքն էլ դադարեց ջաղացը գնալուց. և երբ փոքրիկ Ալօիզան երբեմն Նելլօի մօտ էր վազում և մտերմութեամբ նրա ձեռք բռնում, այն ժամանակ Նելլօն ժպիտն երեսին ասում էր.

— Սիրելի Ալօիզա, մի գար ինձի մօտ և մի բարկացնիր հօրդ. նա չէ ուզում որ ինձ հետ լինիս. կարծում է թէ ես քեզ ծուլութիւն եմ սովորեցնում:

Նելլօն կարծում էր թէ ջաղացպանն այն պատճառով բարկացաւ նրա վրայ, որ նա համարձակուել էր Ալօիզի պատկերը նկարել: Առաջ՝ տուն դառնալիս՝ սովոր էր ջաղացի մօտ կանգ առնել և բարեւել նրա մէջ ապրողներին. այդ ժամանակ Ալօիզան իւր փոքրիկ ու սալիտակ ձեռք դուրս էր հանում պատուհանից և Պատրաշին մի ոսկոր կամ հացի կտոր ձգում: Իսկ այժմ՝ շունը տխուր նայում էր ջաղացի փակ դռանը, երախան էլ նրա մօտով անցնում էր շտապ-շտապ, դառնացած սրտով: Աղջիկն այդ ժամանակ գործը ձեռին՝ նստած էր լինում վառարանի մօտ և երբ տեսնում էր, թէ ինչպէս նրանք անց են լինում, և արտասուք թափւում էր նրա ձեռագործի վրայ:

Քանի գնում էր երախաներն ուշ ուշ էին տեսնւում. նրանց առաջնայ պարզութիւնն ու զուարթութիւնը վաղուց անյայտացել էր: Բայց փոքրիկ տախտակը դեռ կախուած էր նրանց վառարանի վերեւ և Նելլօն չէր կարողանում հասկնալ, թէ ինչո՞ւ իւր նկարն ընդունեցին, իսկ իրան վռնդեցին: Բայց նա չէր տրտնջում. նա սովոր էր ցաւերն ու հոգսերը լռութեամբ տանել:

— Մենք աղքատ ենք, շատ անգամ ասում էր նրան ծերունի Յովհաննէսը, մենք պարտաւոր ենք լռութեամբ տանել բոլորը՝ ինչ որ նախախնամութիւնը մեզ կըտայ, եւ միշտ շնորհակալ լինիլ նրա:

Տղան լռութեամբ լսում էր այս խօսքերը, որովհետեւ ծերունուն շատ էր յարգում, բայց ինչ որ յուսոյ քաղցր ձայն կարծես չընչում էր նրա ականջին. « Աղքատի զաւակները նոյնպէս կարող են զարգանալ և յառաջդիմել » : Այս հանճարեղ տղան մեծ հաւատ ունէր իր բարոյական ոյժերի վրայ :

Մի անգամ փոքրիկ Ալօիզան արտասուալից աչքերով նրա մօտ վազեց և սկսեց պատմել թէ վաղը իւր անուանակոչութեան տօնն է, բայց ծնողները իրան թոյլ չեն տուել՝ նեղօին էլ հրաւիրել ընթրիքի : Նեղօն քնքշութեամբ համբուրեց Ալօիզին եւ վստահութեամբ ասաց .

— Մի լար, սիրելի Ալօիզա, ժամանակով ամեն բան կը փոխուի : Կըգայ ժամանակ, որ այն տախտակն էլ, որ ես հօրդ ընծայեցի՝ ոսկու քաշով կը ծախուի. այն ժամանակ հայրդ էլ իւր դռները իմ առաջ չի փակի : Դու ինձ սիրիր, փոքրիկ Ալօիզա, իմացիր որ ես երեւելի նկարիչ եմ դառնալու :

— Իսկ եթէ չսիրե՞մ, ասաց աղջիկը արտասուախառն ժպիտով՝ Նեղօն, որ աչքերը յառել էր դէպի հեռուն երեւցող եկեղեցին՝ ցածր ձայնով խօսեց .

— Այնուամենայնիւ ես երեւելի նկարիչ կը դառնամ : Այո, Ալիօզա, կամ երեւելի մարդ կը դառնամ կամ կը մեռնեմ :

— Ուրեմն դու ինձ չես սիրում, միամտութեամբ ասաց Ալօիզան և հեռացաւ նրանից :

Բայց Նեղօն ժպտաց, գլուխը շարժեց և դաշտով գնաց դէպի իրանց տունը : Նա ճանապարհին գնում և երեւակայում էր, իբր թէ ինքն արդէն հասել է փառքի, ամէնքը ճանաչում են իրան և պատահելիս ուրախութեամբ բարեւում. իսկ գիւղացիները չընչում են միմեանց ականջին. « Նայեցէ՛ք, դա երեւելի նկարիչ է, ամբողջ աշխարհում հռչակուած է դրա անունը. բայց դա մեր փոքրիկ ու խեղճ Նեղօնն է, որ շարունակ կաթն էր տանում քաղաք ծախելու : Մտածում էր, որ այն ժամանակ պապի համար թանկագին մահուդէ և թաւիչէ շորեր կարել կըտայ : Պատրաշի համար կը գնէ ոսկէ վզնոց և կ'ասէ . « Ահա իմ ընկերս, ահա նա որ իմ միակ բարեկամն էր » : Իւր համար մի մեծ, սպիտակ մարմարէ ապարանք կը շինէ՝ չքեղ այգիներով շրջապատած. նրա մէջ կապրին բոլոր աղքատ երեխաները, անտուն անտէր որբերը, ընդունակ պատանիները, որոնք ձգտում են դէպի բարին ու գեղեցիկը . . . : Նեղօն այնպէս էր ընկղմուել այս փայլուն եւ անշահաւէր մտքերի մէջ, որ իրան լիովին երջանիկ էր զգում. մինչեւ անգամ նա մոռացել էր, որ այդ օրը Ալօիզի տօնն էր, բոլոր գիւղացի երախաներ նրա մօտ երգում, ուրախանում էին,

ուսում էին անուշահամ կարկանդակներ և սրնգով պար էին գալիս. իսկ ինքը տանը միայն ցամաք հաց ունէր ուտելու:

— Վնաս չունի, Պատրաշ, ասաց նա շանը գրկելով, երբ երկուսն էլ նստած էին խրճիթի շէմքին և ականջ էին դնում ջաղացից հնչող ուրախ ձայներին. — Վնաս չունի, Պատրաշ, ամէն ինչ կը փոխուի:

Նելլօն հաւատ ունէր ապագայի վրայ. իսկ Պատրաշի կարծիքով՝ ջաղացում դրուած համեղ ընթրիքն աւելի լաւ էր, քան թէ ապագայի փայլուն ցնորքները:

Եւ Պատրաշն, ամէն անգամ, ջաղացպան Կօզէզի տան մօտով անցնելիս բարկացած մըմումում էր:

(Շարունակելի)



ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

Երբէք որ եւ է ծերի մը կատակ ընելով մի՛ գուարճանաք, հոգ չէ թէ ան շատ զառամած, դժբախտ եւ կամ թշուառ ըլլայ: Ամէն աղետոր գլխու վրայ Աստուծոյ ձեռքը սիրով կը հանգչի:

Երբէք ոչ չկտի պատմութիւններ պատմեցէք եւ ոչ ալ մտիկ ըրէք: Մաքուր խօսքերը ու մաքուր վարմունքը ճշմարիտ ազնւուականութեան նշանն են: Առանց երբէք ձեռքերնիդ աղտոտելու չէք կրնար աղտեղութիւն մը չօչափել:

Երբէք մէկը մի՛ խաբէք եւ ոչ ալ անիրաւ եղէք ձեր խաղերուն մէջ: Խաբելը ամէն տեղ եւ ամէն հասակի մարդոցմէ արհամարհելի է: Ձեր խաղերը փոխանակ ձեր նկարագիրը տկարացընելու՝ թող ալ աւելի զօրացնեն:

Երբէք ուրիշներու վրայ ծաղրելի մականուններ ընէք, հոգ չէ՝ թէ ուրիշները ինչ կ'ուզեն թող ըսեն ձեզի: Յեխ նետելով չէք կրնար մի եւ նոյն ատեն ձեռքերնիդ մաքուր պահել:

Երբէք մէկու մը անգթութիւն մի՛ ընէք. պարտաւ տեղը ճանճ մը իսկ վնասելու իրաւունք չունիք. չարասրտութիւնը սուտ կը տարբերուի նշանն է, իսկ բարութիւնը՝ ազնուութեան:

Երբէք մի՛ սաեք. մինչեւ իսկ անմեղ կամ ձերմակ սուտերը սեբիծեր կը ձգեն նկարագրին վրայ: Ի՞նչ է ձեր կարծիքը ստախօսի մը նկատմամբ: Կ'ուզէ՞ք որ ուրիշ մարդիկ ալ ձեր վրայ ունենան այն կարծիքը՝ զոր դուք ստախօսի մը վրայ ունիք:

Երբէք մի՛ վարանիք ոչ ըսելու, երբ ձեզի սխալ քան մը ընել տալ կ'ուզեն, բայց ատիկա ըսելու համար քաջութիւն կ'ուզէ:

լաւագոյն քաջութիւնը՝ բարոյական քաջութիւնն է, սակայն ոչը ա՛յնչափ որոշ ըսէք որ, ոչ մէկը կարենայ հասկնալ թէ այո՛ւ ըսել կուզէք:

Երբէք իրարու հետ մի՛ վիճիք, մի՛ կռուիք: Եթէ ձեր լեզուն անզուսպ է, արգիլեցէք զայն, եթէ պէտք ըլլայ բռնեցէք զայն. երբէք մի՛ թողուք լեզունիդ որ ձեր գէշ բնաւորութիւնը ուրիշներու ալ յայտնեն:

Երբէք ընկեր մի՛ ընտրէք այն տղաքը, որոնք շարունակ գէշ խօսքեր կը խօսին և չարութիւններ կը գործեն: Տղայ մը՝ ինչպէս նաև մարդ մը կը ճանչցուի իր յարաբերութիւն հաստատած ընկերէն:

Երբէք ձեր հօրը և մօրը հետ տմարդութեամբ մի՛ վարուիք ու անոնց դէմ կոշտօրէն մի՛ պատասխանէք, այլ միշտ քաղցրութեամբ հնազանդեցէք անոնց ամէն մէկ հրամանին:

Երբէք մի՛ երեւակայէք թէ ձեր պզտիկ տարիքին մէջ՝ ձեր հօրը եւ մօրը ամբողջ կեանքերնուն մէջ սորվածէն աւելի բան գիտէք: Իմաստութիւնը մանկանց տրուած չէ:

Երբէք ձեր քաղաքավարութիւնը մէկ կողմ մի՛ դնէք՝ երբ ձեր գեղեցիկ հանդերձները վրանէդ հանէք:

Երբէք մի՛ մոռնաք վերջապէս որ, զքեզ Աստուած ստեղծեց, որպէս զի քաղցր, զուարթ, սիրուն եւ օգնող էակներ ըլլաք:

Թարգմ. Անգլ.է ՅԱՅՈՒ Ա. ՄԵԼԳՈՆԵԱՆ

ԿՈՅՐԻՆ ՀԱՃՈՅՔՆԵՐԸ

Երբեք ինծի համար ժամանակը երկար չէր տեսեր: Երբ օդը գեղեցիկ է. տունէն դուրս, աղուոր տեղ մը կը նստիմ՝ արեւին, պատի մը, ժայռի մը, շաղանակենիի մը դէմ՝ ու մտքովս կը տեսնեմ հովիտը, դղեակը, զանգակատունը, տուները, որոնց բոխերիկներէն ծուխերը կ'ելլեն, կովերը՝ որոնք կ'արածին, ճամբորդները որոնք կ'անցնին ու կը խօսուըռտին ճամբուն վրայ՝ գացած ատեննին, ինչպէս կը տեսնէի երբեմն աչքերով: Գիտեմ եղանակները՝ ամբողջ այն ժամանակուան պէս ուր կը տեսնէի վարսակներուն կանանչնալը, մարգագետիններուն հնձուիլը, ցորեններուն հասուննալը, շագանակենիներու տերեւներուն դեղնիլը և թռչուններուն սալորենիներուն վրայ թռչիլը: Ականջներուս մէջ, ձեռքերուս վրայ, ոտքերուս տակ աչքեր ունիմ ես: Ամբողջ ժամեր կ'անցընեմ փեթակներուն մօտ՝ մտիկ ընելով մեղուները որոնք

կը սկսին բզզալ յարդին տակ, ու արթննալով, մէկիկ մէկիկ դուրս կ'ելլէն իրենց դռնակէն, հասկնալու համար թէ հովը մե՞ղմ է ու առուոյտը կը սկսի՞ ծաղկիլ:

Մողէզներուն չոր քարերուն մէջ սահիլը կը լսեմ, գիտեմ ամէն ճանճերուն ու ամէն թիթեռնիկներուն օդին մէջ իմ շուրջս ըրած թռիչքնին, ամէն զատկածճիներուն քալելը՝ խոտերուն կամ չորցած տերեւներուն վրայ՝ արեւուն տակ: Իմ ժամացոյցս ու օրացոյցս սա՛ է, տեսէ՛ք: Կ'ըսեմ ինքնիրենս. « Ահաւասիկ կ'ընեն որ կ'երգէ, Մարտ ամիսն է ուրեմն, ու մենք տաք օրեր պիտի ունենանք. ահաւասիկ կեռնելը որ կը սուլէ, Ապրիլ ամիսին մէջն ենք. ահաւասիկ սոխակը, հետեւաբար Մայիս ամսուն մէջ ենք. ահաւասիկ ջորեակը, Սէն Ժանի ատենը եկած է. ահաւասիկ ճրպուռը, Օգոստոս ամիսն է ուրեմն. ահաւասիկ տորտիկը, այգեկոտթի ժամանակն է, խաղողն հասունցած է, ահաւասիկ տուարծիկը, ահաւասիկ որինները, ձմեռը կ'ողջունեն: Ասոնք օրուան ժամերս ալ կը ցուցնեն: Ինքնիրենս կ'ըսեմ կատարեալ կերպով այն ժամը՝ որ սահմանուած է թռչուններու երգելուն, միջատներու բզզացումին եւ տերեւներու խշրտուքին որոնք կը բարձրանան ու կը մարին դաշտին մէջ, քարեւուն երկինքին մէջ բարձրանալուն, մնալուն կամ խոնարհելուն համեմատ: Առտուանց ամէն բան ոգեւորութիւն ու զուարթութիւն է, կէսօրուան միջոցին՝ կը նուազի քիչ մօր. իրիկուան կը վերսկսի պահ մը, բայց աւելի՛ տըխուր ու աւելի կարճ. յետոյ կը մեռնի ու կը վերջանայ:

Երբ կը սկսիմ ձանձրանալ, բարի Աստուծոյ կ'աղօթեմ մինչեւ որ շրթունքներս յոգնին իր սուրբ անունին վրայ եւ մատներս՝ համբիշխա հատերուն վրայ: Ո՞վ է որ պիտի ձանձրանար՝ ամբողջ օրը խօսելով իր բարի Աստուծոյն հետ, որ չի դադրիր զայն մըտիկ ընելէ. եւ յետոյ Սէն Բուէնի եկեղեցիին զանգակը՝ օրուան մէջ հինգ անգամ չի՞ դարներ:

Ձմեռը, վառարանին մէջ կրակ կայ, տղաքներուն սանդալին աղմուկը՝ տանը մէջ, շագանակներ՝ զորս կը կեղեւես, բակլաներ՝ զորս կը փոճոկես, Եգիպտացորենը՝ զոր կը հատկտես, կանեփ՝ զոր կը հիւսես. այս աշխատութիւններուն ամէնքն ալ աչքի պէտք չունին:

Ամբողջ ձմեռը կ'աշխատիմ վառարանին անկիւնը՝ չաղակրատելով տղոց հետ, կամ այծերուն ու հաւերուն հետ՝ որոնք մեզի մօտ կ'ապրին, իսկ ամառն ալ կը հանգչիմ: Ո՛հ, ո՛չ, ժամանակը երկար չէր գար ինձի համար. մի միայն, երբեմն կ'ուզէի տեսնել, ինչպէս հիմա, դէմքը անոնց՝ որոնք ինձի կը հանդիպին ճամբուս վրայ, եւ զորս ճանչցած եմ հին ատեններուս մէջ

ԶՈՒԱՐՃԱԼՈՒ

ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍ ՄԸ

Ուսուցիչներուն մէջ կան որ մեզի բնաւորութիւն մը ունան և ատոր համար կը վայելեն... « պամպարակ » մակդիրը, Մէր մեծայարգ միւսին ալ այդ տեսակէն էր, սակայն, պէտք է խոստովանիլ թէ, իր գլխուն նիւթական եւ բարոյական պարունակութիւնը, սագի մը հետ բաղդատմամբ, — օ՛հ, անտարակոյս — զգալի առաւելութիւններ ցոյց կուտար. Համեստ ուսուցիչ աշխարհագրութեան. այս Մեծ. Միւսին թաղային վարժարանի մը մէջ կը դասախօսէր ուր բաւական ուշիմ եւ անտառակ տղաքներ կը յաճախէին: Մեր « պամպարակ » դասատուն խնդալ չէր գիտեր բնաւ, առաւելին քառասուն օրը անգամ մը կը ժպտէր: Դէպի ամսուն 15—20ի. այն ալ եթէ... անցեալ ամսականը առնելու ըլլար: Այսու հանդերձ՝ դասախօսութիւնները հետաքրքրաշարժ էին, իր աշակերտները. — մանաւանդ ձմեռ ատեն ուր ճանճ չկայ — բերանարաց կ'ունկնդրէին այդ պերճաբոս ուսուցիչը:

* *

Վարժարանին դասախօսութեանց հրաւերի զանգակը հնչած էր արդէն տասն վայրկեանէ ի վեր՝ եւ դասարանին մէջ զուարթամիտ աշակերտները իրենց « պամպարակ » միւսիւ Պակասեանին կը սպասէին: Երբ տիպար ուսուցիչը դասարանէն ներս կը մտնէ. անմիջապէս տղաքները ոտքի ելլելով միաբերան կ'ողջունեն զինքը — Բարի գալուստ կը մաղթենք մեր պատուական ուսուցիչին: — Բարին հոգիներնուդ ըլլայ, կը պատասխանէ լըջօրէն դասատուն:

Եւ ամէնքն ալ տեղերնին նստելով՝ միւսիւ Պակասեան սապէս կը սկսի դասը:

— Այս անգամուան համար, սիրելի աշակերտներս, ձեզ խոստացած էի երկրագունտիս վրայ ընդհանուր աշխարհագրական տեղեկութիւններ տալու: Արդ, պարտիմ ըսել թէ, ըստ վերջին չափական հաշիւներու, Եւրոպիոյ տարածութիւնն է 9,890,849 քառ. քիլօմէթր: Ասիոյ տարածութիւնը՝ 44,262,530. Ափրիկէինը՝ 29,825,000. Ամերիկայինը՝ 39,067,860. Աւստրալիայինը՝ 9,959,425, իսկ Սառուցեալ Բեւեռներունը՝ 4,494,336 քառ. քիլմ: Ընդամենը կ'ընէ՝ 136,500,000 քառ. քիլմ. որ է երկրագունտիս ցամաքային տարածութիւնը: Գալով ջրային տարածութեան, ահաւասիկ, Սառուցեալ ծով և ովկիանոսներու տարածութիւնն է՝ 33,700,000 քառ. քիլմ. Հնդկական ովկիանոսինը՝ 74,890,000. Ատլանտեան ովկիանոսինը՝ 89,860,000. Իսկ Խաղաղական ովկիանոսինը՝ — որ աշխարհիս ամէնէն ընդարձակ տարածութիւնը կը կազմէ, 175 մի-

լին քառ. քիւմ. ընդամէնը կ'ընէ՝ 373,450,000 քառ. քիւմ:
Ա. Աւակերս. — Ըսել կ'ըլլայ որ միւսիւ, այդ հաշուով՝ երկ-
րագունտիս ցամաքային եւ ջրային ընդհանուր տարածութիւնն է՝
509,950,000 քառ. քիւմ:

Դասասուն. — Տարակոյս չկայ:

Ա. Աւակերս. — Ուրախ եմ ատիկա տեղեկանալու: Ես կը
կտրծէի որ՝ աշխարհս շատ աւելի պզտիկ է, Կրնանք ուրեմն հան-
գիստ սանկալաբիթի խաղալ: Տնօրէնը միշտ՝ տեղ չկայ ատանկ
բաներ խաղալու ըսելով՝ մեզ կարգիլէ, թող ան ալ հոս գայ դաս
առնելու որ սորվի... կարճատեսը:

Բ. Աւակերս. — Անշուշտ միւսու որ եւ է տարածութիւն մը իր
կիդրոնն ունի: Արդ, ես ալ ձեզ կը տեղեկացնեմ որ... աշխար-
հիս կեդրոնը դասարանին մէջն է... եթէ չէք հաւատար չափե-
ցէք...:

Գ. Աւակերս. — Բայց խնդրեմ, միւսիւ, այդ 509,950,000 քառ.
քիւմ. ընդհանուր տարածութիւնը՝ աշխարհիս լա՞յնքին է թէ չէ
երկայնութեան:

Դասասուն. — (աչեբը բանալով) Հէ՛ է՛ է՛ է՛ է՛... այդ ի՞նչ
տարօրինակ առասպել...: Ձե՞ս գիտեր որ աշխարհս ձմերուկին
պէս կ'որ է՛...:

Գ. Աւակերսը — Տէր ողորմեա՛, միւսիւ, օտաւ ի՞նչ կայ չկայ:
Աշխարհիս քառակուսի ըլլալը կ'ուրանա՞ք...:

Դասասուն — (բարկութեամբ) Ծօ՛, խելքդ գլուխդ ժողվէ. աշ-
խարհս կ'որ է, կ'ըսեմ կ'որ քեզի:

Գ. Աւակերս. — Ես ալ ձեզի կը պնդեմ որ քառակուսի է:

Դ. Աւակերս. — (ախորի ձայն հանելով) Կու՛կու՛ լիկ՛կու՛ու՛:

Դասասուն. — (զարմանալով) Այդ աքլորը ո՞ւրեք ելաւ:

Դ. Աւակերս. — Հաւկիթէն... մեր հաւնոցին կը պատկանի:
Քառակուսի աշխարհին վրայ աւկիթ հաճելու կուգայ:

Դասասուն. — (Ապշած) Աքլորը հաւկիթ կ'ածէ՞ տղայ:

Դ. Աւակերս (ժպտելով) Իմին հայրիկս հարուստ է:

Դասասուն. — (հառաչելով) Երջանի՛կ, նզովի՛ց արմատը: Եթէ
ես ալ ունեւոր ըլլայի, ասանկ ամիսը 200 զրուշով ձեր հոգը կը
տանէի՞ միթէ:

Դ. Աւակերս. — Մենք միշտ երախտապարտ ենք ձեզ միւսիւ:
Այն որ աշխարհիս քառակուսի ըլլալուն հաւատք չէք ընծայեր,
կ'որ ըլլալը ապացուցէք փաստերով:

Դասասուն. — Շատ լաւ, մտիկ ըրէք ուրեմն:

Բ. Աւակերս. — Մեր նորաճաշակ ականջները ձեր բարի տը-
րամադրութեան ներքեւ են, կ'աղաչենք որ սկսիք:

ՀԱՃԻ ՄԻԻԹԱՐ

(Շարունակելի)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴՄՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐՈՒ ՄԷՉ

ԿՐԹԱ-ԿՐՕՆԱԿԱՆ ՄԻԱՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԺՁ. Եւ Ժէ. դարերուն մէջ կազմակերպուեցան ժիզուիթներու, Օռաթոռականներու և ժանսէնիսթներու դպրոցները, որոնք քիչ կամ չատ կրթական վիճակներուն ազդեցին:

Ժեզուիթները. — Այս միաբանութեան հիմնադիրը Իգնատիոս Լոյոլա եղաւ 1534ին: Նախնական նպատակը Պաղեստինի մէջ կրօնականներու գաղթականութիւն մը հիմնել էր, ինչպէս նաեւ կռապաշտներուն Աւետարան քարոզել. բայց այդ ծրագիրները չկարողացաւ իրականացնել: Յետոյ ուշադրութիւնը ժողովեց բողոքականութեան դէմ: Այս նոր ձեռնարկին մէջ քաջալերութիւն գտնելով պապական իշխանութենէն, իր միաբաններովը շրջեցաւ և ամէն երկրի մէջ գաղափարակիցներ ունեցաւ:

Յիսուսի ընկերութեան այս միաբանութիւնը՝ իր ժամանակի դաստիարակութեան կարօտութիւնը լրացնել աշխատած է: Ըստացուած բարձր դիրքին և աւանդուած աստուածաբանութեան, փիլիսոփայութեան, ուսման, հնագիտութեան ու գրականութեան շնորհիւ, ամէն երկրի մէջ ազդեցութիւն ձգեցին և կարեւոր էջ մը բացին եկեղեցական պատմութեանց մէջ: Ուր որ գացին՝ նախակրթարաններէ աւելի գօլէթներ բացին:

Ժիզուիթը կ'աշխատի մտքին պայծառագոյն կարողութիւնները գերազանցօրէն մշակել: Առհասարակ հոգիէն աւելի ձեւին, խորհուրդէն աւելի շարադրութեան կ'ուշադրէ: Մտքին բազմակողմանի վարգացումին հակառակ է: Բազդատաբար՝ պատմութեան շատ յարգ չի տար. ինչպէս իր Հայրերէն մէկը կ'ըսէ. « Ան որ պատմութիւն կ'ուսանի, կը կործանի »: Դպրոցավարութեան մէջ շատ մեղմ ու սիրաշահող է, սակայն յարաբերական կեանքի համար կղզիացած է և կը կղզիացնէ իր ուսանողներն ալ որոնք խիստ քիչ պատեհութիւն կ'ունենան իրենց ծնողքներն իսկ տեսնելու: Յառաջացման իբր խթան, մեծ յարգ կուտայ մրցանակի: Խնդութեամբ և հաճոյքով կը դիտէ ուսանողներու յառաջդիմութիւնը որոնք զիրար կը կոտորեն, կ'արմկեն և կը գլխեն: Այս նախանձալից և տենդոտ ոգին ալ աւելի բորբոքելու համար ամէն միջոց կը գործածէ:

Օռաթոռականներ. — Ս. Փիլիպոս տը Նէյրի՝ Օռաթոռական-
կրօնական միաբանութեան հիմնադիրն է. տպրած 1515 — 1595:
Սա՝ նշանաւոր ընտանիքէ մը յառաջ եկաւ. Իտալիոյ Ֆիօրէնցա
քաղաքին մէջ: Մեղմ, քաղցրաբարոյ և ազնիւ պատանեկութիւն
մը անցուցած է: 1550ին քանի մը բարեկամներու ընկերակցու-
թեամբ հաստատեց եղբայրակցութիւն մը որպէսզի Հռոմ այցելող
աղքատները, անտուն մարդերը և հիւանդները հոգայ ու անդա-
մակցողներուն անձնական սրբացումին ու պարտաճանաչութեան
հետամուտ ըլլայ: Երբոր բաւական ընդունելութիւն գտաւ, իր
աշխատանքի ասպարէզը ընդարձակելու համար հրապարակին
վրայ աւելցուց նաեւ ընդհանուր երիտասարդաց բարոյական եւ
կրօնական կրթութեան հոգը: Այս վերջի շարժառիթը իրագոր-
ծելու համար կը հաւաքէր երիտասարդները եկեղեցիներու մէջ
և հոգեւոր կեանքերնին արթնցնելու ու ոգեւորելու համար կը
խօսէր, կը հրահանգէր: Աշխարհիկ երիտասարդները քաշելու ու
համոզելու համար աղօթատեղիները մէջ յատկապէս պատրաս-
տուած հոգեբոլորութիւններ (*) (oratorio) կ'երգուէին: Այս երգե-
րուն և նուագաւոր թատերախաղերուն կը յարակցուէին կրօնա-
կան ու գրական ճառախօսութիւններ, ներկայ Բողոքական եկե-
ղեցիի ծլարձակած Բրիստոնէական Հանից ընկերութեան կը նը-
մանէր Օռաթոռականութիւնը: Նէյրիի գերազնիւ ու քրիստո-
նէական նկարագիրը քաշեց ամենամեծ բազմութիւն մը իր ետե-
ւէն: Նէյրի ժողովրդային սուրբ մը եղած է կաթոլիկ եր-
կիրներու մէջ: Իր գործընթացքը, նորաոխր, ոչ-միջնադարեան
և հակալանական էր: Առարկաները և սկզբունքները բնազանցա-
կան ու վերացական ըլլալէ շատ հեռի, դրական էին: Միաբանու-
թիւնը կազմակերպութեան համար որ և է գրաւոր կանոն մը չի
թողուց:

Մահէն վերջ նմանեցաւ անոնց որոնք կ'ապրին բարոյական
ազդեցութեամբ, կ'ապրին հոգիներու և սրտերու մէջ: Այս ազ-
դեցութեան շնորհիւ, իրեն հետեւողները բնաւ չի թուլցան երբ
իրենց վարպետին ու վարդապետին մարմինը հողին յանձնեցին:
Շատ տեղեր ցրուելով բազմաթիւ դպրոցներ բացին: Օռաթոռա-
կանները՝ Ժիզուիթներու հետ թէեւ ինչ ինչ կէտերու մէջ տա-
րակարծիք և տարագործ՝ այսու ամենայնիւ անհաշտ չէին: Իրենց
դպրոցներուն մէջ մաթեմատիք, պատմութիւն, աշխարհագրու-

(*) Oratorio կը կոչուին այն բանաստեղծութիւնները եւ բա-
սեղութիւնները որոնց նիւթերը առնուած են Ս. Գրոց այլեւայլ
դէպքերէն ու դիմեքեմ:

թիւն և փիլիսոփայութիւն՝ աւելի բարձր տեղ կը բռնէին քան ժիզուիթներու քով: Դպրոցավարութեան մասին արթուն հսկողութիւն կ'ընէին: Բիէր Լամէ, այս միաբանութեան նշանաւոր դէմքերէն իմէկը, կ'ըսէ. « Դաստիարակ մը, գաւազանին հետ սպառնալիք, վարձատրութիւն և քաջալերութիւն գործածելու է. բայց գիտնալու է թէ ի՞նչ պարագայի տակ գործածելու է զանոնք »:

Մ. Ս. ՈՐԲԵՐԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Կարդացի, Պ. Մ. Սուրեան, Բիւրակցի վերջին՝ չորս թիւերուն մէջ ձեր Գրախօսականը բարձրագոյն դասընթացքի յատուկ Բնագիտութեան նկատմամբ: Ձեր այդ գրախօսականը, որով կը ձգտիք նսեմացնել դասագիրքիս իր ընդունելութեամբ գտած փառքն ու արժանիքը, հաւատացէ՛ք, բարեկամս, որ Զրախօսական մը ըլլալէ անդին շանցնիր, քանի որ դուք իսկ կը խոստովանիք ձեր առաջին տողերուն մէջ թէ այդ դասագիրքս արդէն ընդունուած ու գործածական դարձած է չափ մը վարժարաններու մէջ, ինչպէս նաեւ ձերինին՝ երբ կարճ ժամանակ մը տեսչութեան պաշտօն կը վարէիք ի Սամաթիա, շնորհիւ Մեծ Միհրան էֆ. Արիկեանի:

Դասագրքի մը ընդունելութիւն գտած ըլլալը արժէք մը ունեցած ըլլալու նշանը չէ՞ միթէ, ինչ որ դուք ալ խոստովանած էք ինծի. շնորհաւորած էք զիս յաջողութեանս մասին. բայց հիմա, չեմ գիտեր ի՞նչ հով, ի՞նչ մասնաւոր պարագայ յոռետես կը դարձնէ զձեզ երէկուան Լաւ կոշածնուդ յայտօր յոռի ըսելու համար:

Սկզբունքի ա՛յսչափ յեղակարծ փոփոխութիւն, քանիւնի գոյներ առնելու ա՛յսչափ դարձդարձիկ ընդունակութիւն, այսչափ տղայական փոփոխամտութիւն, հաւատացէ՛ք որ լաւ գաղափար մը չի ներշնչեր ինծի ձեր մասին:

Իբրեւ ուսուցիչ, իբրեւ տեսուչ, ձեր գահավէժ անկումը կրելէ ետք, այսպէս ուրեմն ուրիշի մը գործին անուանարկումովը կ'ուզէք դարմանուիլ: 22 ֆօրմանոց գիտական երկասիրութեան մը դէմ երկու տող ցափռտուք և բոլորովին անճարակ գրախօսական մը գրելով է որ կը փափաքիք փառքի դափնի մը կորզել ձեր ճակտին: Չէ՛, բարեկամ, չէ՛, այդպէս բան չկայ:

Եթէ երբէք ցաւած էիք ինձ դէմ այս դատագիրքիս պատրաստութեան պահուն ձեր աշխատակցութիւնը մերժելու համար, իրաւունք չունիք: Քանի որ գիտէք պատճառը և քանի որ, ինչպէս կը յիշէք, ԿԵՆՈՐՂԻ մասին ձեր գրած լափիւրինդոսին մէջէն չկրցաք դուրս ելլել երեք ևրկայն գիշերներու մէջ գլուխ ուռնցնելով:

Եթէ երբէք, կ'ըսեմ, ցաւած էք ինձ դէմ, վարժարանիս մէջ ձեզի պաշտօն չտալու համար, ատոր ալ իրաւունք չունիք բացարձակապէս, քանի որ ես չեղայ ձեր Սամաթիոյ վարժարանի տեսչական պաշտօնէն հրաժարուելուն պատճառը, որով փնաս մը պահանջէք ինէ:


Կ'ըսէք թէ առաջին անգամ է որ կը քննադատուի սոյն դատագիրքը ձեր կողմէ՝ գիւտ մը բրած ըլլալու ամենամեծ յաւակնոտութեամբ. կը քննադատէք, բարեկամ, դեռ անցեալ տարի երբ «Սուրհանդակ»-ի մէջ Տօքթօր Ուսանող մը ձախող կերպով քննադատեց զայն և «Մանգումէ» ալ մեր պատասխանները հրատարակեց, որով անգամ մը եւս շեշտուելով դատագիրքիս շահեկանութիւնը Բ. տպագրութեան մօտալուտ աստիճանին բերաւ հասցուց զայն:

Գալով ձեր խժրժել ուզած մէկ քանի բառերուն, հարկ չեմ տեսներ ամէնուն ալ պատասխանել, խնայելով ձեր խակութեանը գիտութեանց այդ ճիւղին մէջ. դուք գրքիս մէջ կարգացեր էք թէ՛ «Ոսկորները ճկուն են»: Զկուն բառը չէ՞ք տեսներ թէ՛ ի՞նչ առումով գործածեր եմ: Ահա գրածս, էջ 10. Ողնայարը ձեւացնող այս շարքը շատ ամուր ըլլալով հանդերձ՝ ճկուն եւ դիւրաքեփ է. յասկոսքիւն մը՝ որ դիւրութիւն կուսայ մարմնական զանազան շարժումներու: Ասկէ աւելի ի՞նչ պարզ...: Նոյնպէս էջ 6. Խօսուած է մանուկ, աւելի ճիշդը երախայ հասակի վրայ, ուր ոսկորները իրապէս flexible և elastique վիճակ մը ունին. ամէնէն կարծր տեսնուած գանկի ոսկորներն անգամ նորածին մանկան մէջ flexible են. հասկցա՞ք, բարեկամս:

Եթէ դուք, այսպէս հակառակէն կը հասկնաք ձեր ամէն կարգացածները, տեղը չէ՞ ձեզի դարձնել ձեր բառերը եւ ըսել. «Ուրեմն մե՛ղի ձեր միտած թուղթերուն, մե՛ղք բան մը հասկնալ ուզելով՝ ձեր գրածները կարգացողներուն»:


Ահա՛, բարեկամս, ձեր գրախօսականին կարճ մէկ պատասխանը, որմէ աւելի չարժեք գրել. դուք ազատ էք ալ ասկէ անդին գրելու և միտելու որչափ որ ուզէք. ընթերցողը գիտէ դատել ու գնահատել, միայն կը խրատեմ ձեզ որ շնորհով գրողներու պատուին ալ արատ չըրէք: Հեռացուցէք ձեր սրտէն այդ չար նախանձը որ միտէ պատճառն է վարժապետի ստորնացման հետեւաբար եւ անկման: Այսչափը բաւական է:

ԳԻՏԱԿԱՆ ԷԶԵՐ



ՏԱՐՕՐԻՆԱԿ ՇՈԳԵՆԱԻ ՄԸ

Մեր աչքին առջեւ պարզուած միլիոնաւոր առարկաները կամ մեր մտքին յներկայացուած զանազան ծանօթութիւնները դիւրաւ ըմբռնելու համար, բոլոր այն գաղափարները որոնք իրարու հետ ունենան թիւն ունին միասին ամփոփելով զատ զատ խումբերու կը բաժնենք, և այդ ամէն մէկ խումբին որոշ յատկութիւններ տալով մտքերնիս կը պահենք: Մանօթութեան այս շրջա-



նակը որքան որ ընդարձակուի և այդ խումբերուն թիւը որքան որ աւելնայ՝ մեր իմացականութիւնն ալ այնքան զարգացած կը սեպուի:

Առնենք շոգենաւին օրինակը:

Մեր ընթերցողներուն մէջ անշուշտ կան այնպիսիներ, որոնք ծովեզերեայ քաղաք մը այցելած չըլլալով՝ շոգենաւ մը տեսնելու պատահութիւնը չեն ունեցած, ուրիշներ ալ գրեթէ ամէնօրեայ առարկայի մը պէս իրենց աչքին առջեւ ունին զանոնք: Բայց գրեթէ ամէն մարդ, ըլլայ շոգենաւներով վրայ կարդացած չափ բաներ և տեսած բազում պատկերներ ունենալով, ըլլայ ամէն օր

զանոնք տեսած ըլլալով՝ տեսակ մը գաղափար կազմած են անոնց ձեւին վրայ, և երբ նաւերու վրայ խօսուի իրենց՝ մտքերնուն մէջ անմիջապէս կը պատկերանայ ստուերագիծ մը որ շոգեանաւի գաղափարին կը համապատասխանէ, և ամէն օտար ձեւ որ հեռանայ այդ գաղափարաձեւէն՝ տարօրինակ ըլլալու տիտղոսը կ'ընդունի: Ասոր համար է որ պատկերին մէջ տեսնուած շոգեանաւին ձեւը տարօրինակ կ'երեւի մեզ:

Ահա շոգեանաւ մը որ այդ անունը կրելու բնաւ տեղ մը չունի. Երեւակայեցէք լամբարի շիշի պէս կլոր պողպատեայ ահագին գլան մը՝ որու բերանները մէյմէկ քիչ վեր դարձած են ջուրին ներս մտնելը արգիլելու համար, որ երկայնութեան վրայ ձգուած է ջուրին մէջ: Ելեքտրական շարժիչներով կը յառաջանայ և կանոնաւորաբար կը հնազանդի ղէկին: Առաջին անգամ Սէն Լօրան գետին վրայ փորձեցի: Այս շոգեանաւը յատկապէս կը յարմարի թեթեւ ու շատ տեղ բռնող ապրանքներ փոխադրելու համար, ինչպէս բուրդ, բամբակ, եւայլն, որովհետեւ կարելի է այդ նիւթերը լեցնել ու պատսպարել սոյն գլանին մէջ, որու ծաւալը սովորական շոգեանաւներուն մէկ քանի պատիկն է: Սակայն այս շոգեանաւներուն ընծայած անպատեհութիւններն ալ շատ են. եթէ բեռցած ապրանքը քիչ մը ծանր գայ, ջուրերը ներս կը խուժեն և շոգեանաւը կ'ընկղմի. նոյնպէս թեթեւ հով մը դիւրութեամբ կը շրջէ գայն՝ ծովուն երեսը գլտորցնելով:




ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՐԱԿ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստացանք Էտուառ Ռօտի հետաքրքրաշարժ մէկ վէպին՝ Տիկին Ռօթի թարգմանութիւնը զոր կատարած է Զարմայր: Մեր վիպասէր հասարակութեան ուշագրութիւնը գրաւելու արժանի տետրակ մըն է սա՝ թէ լեզուին սահունութեամբը և թէ մանաւանդ վէպին շահեկաութեամբը որ միշտ ընթերցողին հետաքրքրութիւնը արթսն կը պահէ մինչեւ վերջին էջը:



Ծանօթ երաժշտագէտ Ահարոն Էֆ. Մարրլեան հրատարակած է « Մարե Վերանիսեզ » անունով շատ սիրուն երաժշտական կտոր մը՝ դաշնակի համար գրուած: Կ'արժէ որ հայ արուեստագէտին այն գործն ալ տեղ գտնէ մեր դաշնակի սիրահարներուն ձայնագրութեան տետրերու հաւաքածոյին մէջ:



Ահա տղայոց խումբ մը որ աչքիապուկ կը խաղան. Գտնէ՞ք
թէ ուր է աչքերը կապուած տղան,



ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Կը ծանուցանենք մեր Մեծ. Բաժանորդներուն եւ Բարեկամ-
ներուն որ՝ սիրով եւ առանց փոխարինութեան կը կատարենք ի-
րենց որ եւ իցէ յանձնարարութիւնն՝ եթէ փոխարժէքը միասին
ղրկեն, իսկ հակառակ պարագային՝ անգործադրելի կը մնան:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ
ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն
կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի ճատտէսի, Թիւ. 38, Իգտամ լրագրին դէմ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՅԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ հը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ. եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վաճառականացի, 24 էջ՝

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ Համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վաճառականացի 12 տետր զաւ առնել ուզողը պէտէ վճարէ 12 դրուտ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազպազեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Կօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Ներսիս, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Ներսիս, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա'ա, Կարապետ էֆ. Գօճանեան
Թեփրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Խաբէրդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեօսրիա, Նրուանդ էֆ. Ներկաթեան
Կիւրւն, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Ամատեան
Հիւսիսիսի, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարաշ, Արծ. Տ. Նէրսէս Բէ. Շահինեան
Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարլեան
Սըլվազ, Մանուկ էֆ. Պէլլէրեան
Սիւ հանքի Բեյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեզիր Բեյ » »
Տիւրքիէ, Լեւոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիսեան

Բանի մը տեղերէ, ուր Գործակալ չունինք, հը հարցնեն թէ Հանրագիտակի բաժնեգիրն և կամ մանր յանձնարարութիւններու փոխարժէքը ի՞նչպէս ղրկելու է:

— Ամէնէն պարզ միջոցն է Օսմ. նամակագրոյ՝ դնել նամակին մէջ եւ նամակն ալ ապահովագրել (բանիւս ընել): Նամակագրոյ՝ կրող նամակները ապահովագրելը անհրաժեշտ է, որովհետեւ մեր ձեռքը հասած ժամանակ, երբէք պատասխանատու չենք: